

Խ Ի Զ Ա Խ Մ Ը Լ Ա Ր Ի Վ Ր Ա Յ

Փ Օ Լ Գ Ա Լ Ի Ն Ե Ա Ն Ի Ս Ա Ր Ո Յ Ե Ա Ն Ը

Գրեղի էտք տասնեակէ մը աւելի երկիրներ հայր ու դուստր Գալիներէնքը վերջին շաբաթներուն կը գտնուին Մերձատր Արեւելքի մէջ, ուր կը ցուցադրեն իրենց պատրաստած վաւերագրական մէկ ֆիլմը՝ նուիրուած մարդ ու գրող Սարոյեանին:

1932 թուականին Լիբանան ծնած ու իր պատանեկութիւնը Դամասկոս անցուցած Փօլ Գալիներէնը իր վաղ երիտասարդութեան շրջանէն հետաքրքրուած ըլլալով լուսանկարչութեան արուեստով, կը կատարելագործէ իր սիրած նիւթը Ամերիկայի մէջ ստանալով մասնագիտական ուսում:

Իր շրջուն կեանքին հանգրուանը կ'ըլլայ Գալիֆորնիոյ Ֆրէզնօ քաղաքը, ուր կը հանդիպի բազմաթիւ համաքաղաքացիներու: Գալիներէնը հօրը կողմէ կու գար Խարբերդէն:


Ֆրէզնոյի մէջ, Փօլ Գալիներէնը կը մտերմանայ քանդակագործ Վարազ Սամուէլեանին հետ: Վարազը կը վայելէր մտերմութիւնը Ուիլիըմ Սարոյեանին:

Ահա Փօլին մէջ երազ մը կը ծնի... լուսանկարել հայ հանրայայտ գրողը: Այդ երազը կը մեծնայ: Փօլ Գալիներէնը այս անգամ կը ծրագրէ ֆիլմ մը պատրաստել Սարոյեանի մասին: Բայց, սկսիլ ինչպէ՞ս:

Կ'օգտուի Վարազի բարեկամութենէն եւ անոր արուեստանոցին մէջ գետեղելով իր լուսանկարչական գործիքները, լոյսերը, կը սպասէ յարմար պահի: Այդ պահը կը ներկայանայ շնորհիւ Վարազին:

Սկիզբը, Գալիներէնը կը հանդիպի Սարոյեանի կտրուկ մերժումին: Բայց գրոյց մը ետք, երբ Սարոյեան կը թելադրէ Գալիներէնին խօսիլ հայերէն ու հայերէն երգ մը երգել, Գալիներէնը կը սկսի երգել «Կիլիկիա»: Իրեն կը միանան Վարազն ու Սարոյեանը:

Երեսակայեցէ՛ք, երեք հայեր, Ֆրէզնոյի մէջ երգելով Կիլիկիա երգը, իրենց համար կը ստեղծեն Հա-



յաստանը: Սարոյեան հագիւ կը զայլ արցունքներն իր: Կարծր մերժումին կը յաջորդէ սիրալիրութիւն ու Սարոյեան թոյլ կու տայ որ Փօլ Գալիներէնը նկարէ զինք:

Այդպէս կը սկսի Սարոյեան-Գալիներէն սերտակցութիւնը որուն շնորհիւ Գալիներէնի վաղեմի երազը մարմին առնելով կը դառնայ իրականութիւն, այսինքն կեանք կ'առնէ Գալիներէնական այն ֆիլմը, ուր պատաստի վրայ կը քալէ, կը խօսի, կը յուզէ ակնդիրն ու ունկնդիրը բարի հսկան՝ Ուիլիըմ Սարոյեանը:

Արդարեւ, Գալիներէնի այս գործը որ արժանացած է 6 մրցանակներու ու շրջած 14է աւելի երկիրներու 42 քաղաքներու մէջ եւ ունեցած քառորդ միլիոնէ աւելի հանդիսատես, այս օրերուն, այսինքն 1999ի Յունիս-Յուլիս ամիսներուն, կը ներկայացուին Հալէպի, Դամասկոսի ու Պէյրութի մէջ:

Վերջին այս ցուցադրութիւնները նախաձեռնութիւնն են Հ.Բ.Ը. Միութեան:

Սարոյեանն է, յաղթահասակ կը կանգնի իր հայկական անմոռանա-

լի պէխով ու անկրկնելի ոգիով, ուր կը գտնենք հայուն դարագնաց մարդասիրութիւնը:

Փօլ եւ Սիւզի Գալիներէնքը, հայր ու դուստր, Սարոյեանը դարձուցած դրօշ, ցամաքամասէ-ցամաքամաս կը շրջին, քաղաքէ-քաղաք կը շրջին եւ հայ ու օտար, առաւելաբար օտար հասարակութիւններու ցոյց կու տան խիստ հետաքրքրական այս ժապաւէնը, ուրկէ ժպիտ ու սէր կը սերմանուի Ուիլիըմ Սարոյեանի միջոցաւ:

Յիրաւի, տեսնելու, խանդավառելու բացառիկ առիթ մըն էր 1 Յուլիսի երեկոյեան Հ.Բ.Ը.ի կազմակերպած ֆիլմի այս ցուցադրութիւնը, երբ շուրջ 250 դիտողներ մէկ ժամ ամբողջ զսպուած երկիւղածութեամբ դիտեցին Գալիներէնքու պատրաստած ու Սարոյեան մարդը ներկայացնող այս ժապաւէնը:

Երաժշտութեան ու ֆիլմի պատրաստութեան վարպետութենէն վեր ու անկէ բխող խանդավառութեան ընդմէջէն ներկաները յուզաթաթաւ տրամադրութեամբ հետեւեցան Սարոյեանի կենսագրութեան, անոր Ֆրէզնոյի մէջ ծնած ըլլալուն, մանկութեան, որբանոցային կեանքին, լրագրավաճառ ըլլալուն, կարճ ուսումնառութեան, բանակի զինուոր դառնալուն, Սարոյեանի հայրենիք այցելութեան, ապա ծնողներուն ծննդավայրը մեկնեցան ու վերջապէս պատաստին վրայ գտան ոչ միայն 1900ական շրջանի Ֆրէզնօն, երբ այս քաղաքը հայութեամբ կը շնչէր, այլ տեսան նաեւ Սարոյեանի հրատարակած աւելի քան վեց տասնեակ գիրքերը:

Պատմութեամբ, վիպագիր, թատերագիր ու նկարիչ Սարոյեանը ամբողջ սրտով սիրող մը միայն կրնայ պատրաստել վաւերագրական այսպիսի ֆիլմ մը, որ կ'առնէր թուր դիտողները:

Ու երբեք զարմանալի չէ, որ Հ.Բ.Ը.ի տղոց այս երեկոյին առիթով Գալիներէնքը արժանացան բուն ու երկարատեւ յոտնկայս ծափահա-

րութիւններու:

Գալիներէնքը Սարոյեանին մարդասիրութիւնը, այդ կը նշանակէ հայրն մարդասիրութիւնը դարձուցած դրօշ, զայն կը հանէին երկրէ-երկիր, քաղաքէ-քաղաք, ըսելու համար, որ ա'յսպիսին է հայր:

Իսկապէս քիչ է, շատ քիչ, միայն ծափահարելը Գալիներէնքը այս գործին համար:

Եւ ո՛վ գիտէ, որպիսի՜ նոր ծրագիրներ ունին անոնք իրագործելի, եթէ հայերը հնչուն աջակցութիւն ցոյց տան իրենց:

1 Յուլիսի երեկոյեան, բոլոր ներկաները կ'ուզէին որ Գալիներէնքու պատրաստած այս ֆիլմը շարունակուէր, տեւէր ժամեր: Բայց ինչպէս Սարոյեանին կեանքը, այդպէս ալ այս շարժանկարը պէտք է դիմէր իր վախճանին, թէեւ ֆիլմին հերոսին սահմանուած է անսահման երթ իր գրականութեան ճամբով:

Ֆիլմի ցուցադրութենէն ետք ներկաներուն տրուեցաւ առիթ, որ հարցեր տան:

Տրուեցան խելամիտ հարցեր, որոնց Փօլ Գալիներէնը տուաւ սպառնիչ պատասխան, ուրախացնելով բոլոր ներկաները:

Սարոյեանը համընդհանուր հետաքրքրութեան արժանացաւ իր առաջին իսկ գիրքով «The Daring Young Man On The Flying Trapeze»:

Այս անգամ Փօլ Գալիներէնը է որ բարձրացած է լարի վրայ այնքան խիզախօրէն, որ իր այս գործով կ'արժանանայ համընդհանուր գնահատանքի:

Սիրոյ, հայրենասիրական գործ մըն է Գալիներէնքու կատարածը, որուն ցուցադրութեամբ անգամ մը եւս կը հաստատուի, որ սէրէն ու նուիրումէն միայն, կը ծնին համբաւաբեր գործեր:

Սրտագին շնորհակալութիւն ձեզի, Գալիներէնք, որ ձեր այս գործով մեր սիրած Սարոյեանը աւելի սիրելի դարձուցիք բոլորիս համար: